ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՀԱՅՑՈՐԴ ՏՐԱՄԱԴՐՈՂԻՆ՝ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՐՏՈՆՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2-ՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԼՈՒՐՋ/ՎԱՅՐԱԳ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽԱԲԵԲԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ)

[ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 12305.87]

(ՀԱՍՑԵԱՏԵՐ)

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____

Հայցորդ տրամադրողի անունը՝ _____

Ստացողի անունը՝ _____

Ստացողի գործի համարը՝ _____

IHSS գրասենյակի հասցեն՝ _____

_____

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ուղղված՝ Տնային աջակցության ծառայություններ(IHSS) Տրամադրողին

Վարչաշրջանը/Պետական իշխանության մարմինը/Շահույթ չհետապնդող միավորումը մերժել է ձեր ընտրվելու իրավունքը՝ գրանցվել որպես IHSS տրամադրող և վճարում ստանալ IHSS ծրագրից՝ ծառայություններ մատուցելու համար:

Որպես տրամադրողի գրանցման գործընթաց, այս անձնավորությունը մատնահետքեր է ներկայացրել Կալիֆորնիայի արդարադատության դեպարտամենտ՝ հանցագործ կենսագրության ստուգման համար: Կենսագրության այս ստուգումը կամ դատարանի փաստաթուղթը ցույց տվեցին, որ նա դատապարտված է եղել այնպիսի հանցագործության (հանցագործությունների համար)համար, որ այն իրավունք չի տալիս նրան դառնալ IHSS տրամադրող և վճարում ստանալ IHSS ծրագրից՝ ծառայություններ տրամադրելու համար՝ Բարեկեցության և Հաստատությունների Օրենսգրքի 12305.87բաժնի համաձայն: Հանցագործությունը (հանցագործությունները), որը ձեզ որակազրկել է, ներկայացված է ստորև.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ստացողին նույնպես ծանուցում է ուղարկվել՝ տեղեկացնելով, որ դուք դատապարտվել եք հանցագործության համար, որի պատճառով իրավունք չունեք աշխատել որպես IHSS տրամադրող:

Ստացողը տեղեկացվել է, որ դատապարտման վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց զգայուն բնույթ է կրում և պետք է խիստ գաղտնի պահվի: Ստացողին օրենքով արգելվում է այս տեղեկատվության ցանկացած մաս որևէ անձի կամ հաստատության հայտնել:

Եթե դուք համաձայն չեք այս որոշման հետ, կից SOC 856՝ «Բողոքարկում պահանջել Տրամադրողի Գրանցման մերժման համար» ձևաթղթում բացատրվում է, թե ինչպես դուք կարող եք բողոքարկում պահանջել: Ձեր գրավոր հայցը պետք է ստացվի վաթսուն (60) օրացուցային օրվա ընթացքում՝ սույն ծանուցման ամսաթվից սկսած:

Եթե դուք կարծում եք, որ Կալիֆորնիայի արդարադատության դեպարտամենտից ստացված տեղեկատվությունը ճիշտ չէ, դուք պետք է կապվեք Կալիֆորնիայի Արդարադատության դեպարտամենտի Արձանագրությունների վերանայման բաժանմունք՝ (916) 227-3849 հեռախոսահամարով՝ ճշտելու այն տեղեկատվությունը, որը պարունակվում է ձեր քրեական կենսագրության գործում:

Թեև դուք մեղադրվել եք էջ 1-ում նշված հանցագործության (հանցագործությունների) համար, IHSS ստացողը կարող է ցանկանալ վարչաշրջանին ներկայացնել լրացված SOC 862 ձևաթուղթը՝ « IHSS Ստացողի խնդրանքը՝ Տրամադրողի իրավունքից հրաժարվելու համար», որը ձեզ թույլ կտա աշխատել որպես IHSS տրամադրող և վճարում ստանալ IHSS ծրագրից՝ միայն տվյալ ստացողին ծառայություններ մատուցելու համար:

Դուք կարող եք նաև դիմել ընդհանուր բացառության համար, որը ձեզ թույլ կտա աշխատել որպես IHSS տրամադրող բազմաթիվ ստացողների համար և վճարում ստանալ IHSS ծրագրից: Խնդրում ենք կարդալ կից SOC 863՝ «IHSS Հայցորդ տրամադրողի դիմում՝ ընդհանուր բացառության համար» ձևաթուղթը, թե ինչպես պետք է ընդհանուր բացառութուն խնդրել և ինչպես պետք է լրացնել ընդհանուր բացառության ձևաթուղթը:

Եթե սույն նամակի վերաբերյալ հարցեր ունեք, կարող եք զանգահարել՝ _____: